ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» օգոստոսի 2000թ. N 165

Հիմնական միջոցների (այդ թվում վարձակալված) վրա կատարված ծախսերն ըստ ընթացիկ և կապիտալ բնույթի տարբերակելու հայտանիշերը *և չափերը* [*1)] սահմանելու մասին

«Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13 հոդվածի 4-րդ կետին համապատասխան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

Սահմանել, որ շահութահարկը որոշելիս.

ա) հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը համարվում են կապիտալ ծախսեր, եթե դրանց արդյունքում վերակառուցման, վերազինման, արդիականացման, հիմնանորոգման կամ ընդլայնման միջոցով վերափոխվում է հիմնական միջոցների վիճակը և (կամ) տվյալ հիմնական միջոցի վրա հաշվետու տարվա ընթացքում կատարված ծախսերի մեծությունը գերազանցում է այդ հիմնական միջոցի սկզբնական արժեքի (օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման դեպքում վերագնահատված արժեքի) 10 տոկոսը՝ այդ չափը գերազանցող մասով [*2)]*:*

Հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը ըստ հայտանիշների տարբերակման անհնարինության դեպքում տարբերակումն կատարվում է ըստ չափերի:[*1)]

բ) հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը համարվում են ընթացիկ ծախսեր, եթե դրանք սույն որոշման «ա» կետի համաձայն չեն համարվում կապիտալ ծախսեր:[*1)]

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

**1) ԼՂՀ կառավարության 28.02.05թ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի օգոստոսի 15-ի թիվ 165 որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 84 որոշման խմբագրությամբ:*

**2) ԼՂՀ կառավարության 23.12.08թ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի օգոստոսի 15-ի թիվ 165 որոշման մեջ լրացում կատարելու մասին» թիվ 914 որոշման խմբագրությամբ:*